10678

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«14»07 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0127-23

Ձեռնարկողը՝ ***Քաղաքաշինության կոմիտե***
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք,

Գործունեությունը՝ ***Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի Կոճոռ թաղամասում նոր բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲՓ №0127-23

<14> հոկտեմբեր 2023թ.

Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի Կոճոռ թաղամասում նոր բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքաշինության կոմիտե
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Աշոցք համայնք, Աշոցք բնակավայր

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ), Քաղաքաշինության կոմիտեի կողմից Աշոցք բնակավայրի Կոճոռ թաղամասում նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենքերով թաղամաս (այսուհետ՝ Համալիր), ապամոնհաժելով 20 փայտե երկհարկանի շենքեր:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, տեխնիկական առաջադրանքը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման N 2036845 վկայականը Աշոցք համայնքի կողմից տրամադրված 2023թ. մայիսի 12-ի N 1 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք): Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կառուցապատում: Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատման ենթակա հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 10.8 հա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք), 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Աշոցք համայնքի Աշոցք բնակավարի Կոճոռ 3-րդ թաղամասում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք: Հողամասում առկա են քանդման ենթակա փայտյա երկհարկանի

20 շենք: Տարածքի հարևանությամբ գտնվում են ներթաղամասային ճանապարհներ, բնակելի կառուցապատված և կառուցապատման համար նախատեսված հողեր:

Ուսումնասիրվող տարածքը Շիրակի մարզի Աշոցք համայնքն է, որը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի վերին հոսանքի ավազանում: Տարածքի աշխարհագրական դիրքը բարձր լեռնային է, ռելիեֆը բարդ, ամենացածր կետը 1968 մետր է, առավելագույնը՝ 3196 մետր:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, որը հանդիսանում է մթնոլորտային տեղումների հիմնական մասի տեղափոխումը ճեղքավորված լավաների միջոցով դեպի Արարատյան ստորգետնյա ջրավազան: Տվյալ տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Համաձայն կատարված ուսումնասիրության, տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են խճավազի պարունակությամբ տեղ-տեղ խարամացված բազալտ՝ 10-20%: Ըստ СНиП IV-5-82-ի գրունտները (13) IV, (6д) V I և (37) V կարգի են:

Հայտում ներկայացված ինժեներաերկրաբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ տարածքում բացակայում են Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, ինչպես նաև ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Համաձայն սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի տեղազննվող շրջանը գտնվում է III սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.5g արագացմամբ:

Նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ այն կառուցվելու է գոյություն ունեցող կառուցապատված տարածքում: Համալիրի տարածքում բնության հատուկ պահպանվող և պատմամշակույթային հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Շիրակի մարզի կլիման բարեխառն է, բնորոշ կարճատև զով ամառով և երկար ու ցուրտ ձմեռով: Սառնամանիքների տևողությունը 167 օր, ձյունածածկի տևողությունը 156 օր: Ամռանը օդի միջին ջերմաստիճանը տատանվում է 14.4°C է: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 34°C է: Ձմռանը օդի միջին ջերմաստիճանը տատանվում է -11.6°C է: Տարեկան տեղումների քանակը կազմում է 65-700 մմ:

Համալիրի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- Հողի ընդհանուր մակերես՝ 10.8 հա,
- Ընդհանուր կառուցապատման մակերես 4.2 հա
- Կանաչապատման մակերես 6.6 հա,
- Բնակարանների քանակ 180 հատ,

- Ավտոկայանատեղերի քանակ 150 հատ,
- Բարեկարգման մակերես, այդ թվում ճանապարհներ, թեքուղիներ և մայթեր 63 535 մ² :

Համալիրը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող՝ 15 ուղղանկյունաձև, 38x21մ առանցքային չափերով միատիպ եռհարկ բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնք ունեն նմանատիպ ծավալատարածական լուծումներ: Շենքերից հինգում նախատեսված են նկուղային հարկեր՝ -3.30 նիշում, որոնք ըստ անհարժեշտության ծառայելու են որպես պարզագույն թաքստոցներ: Յուրաքանչյուրը ունի մեկ մուտք, մուտքային հանգույցում տեղադրվելու են վերելակ և չծխացող աստճանավանդակ: Շենքերի առաջինից երրորդ հարկերը բնակելի հարկեր են, յուրաքանչյուրում երեք և չորս սենյականոց երկուական բնակարաններ: Պատերի և ճակատների երեսապատումը նախատեսված է համանման, իրականացվելու են քարե սալիկներով՝ պեմզաբլոկներով, բազալտով, ճակատները տուֆով, տրավերտին, ֆիբրոցեմենտային պանելներով և այլն: Նախատեսվում է արտաքին ջերմամեկուսիչ, գոլորշամեկուսիչ շերտ:

Համալիրի կարկասը կառուցվելու է երկաթբետոնյա կոնստրուկցիաներով: Տանիքը հիմնականում լինելու է երկթեք՝ արտաքին ջրահեռացմամբ: Համալիրի ջեռուցումը նախատեսված է անհատական գազի կաթսաներով: Օդափոխությունը կատարվելու է բնական օդատարներով (100մմ,125մմ և 160մմ տրամագիծ), ծխահեռացման օդամուղները տեղակայված են լինելու տանիքի վրա:

Նախագիծը մշակված է քաղաքաշինական ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 3 տարի, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային ավտոկռունկ, բետոնախառնիչ մեքենա, եռակցման սարք, բեռնատար ինքնաթափ, էքսկովատոր և այլն:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների: Կանաչապատ մակերեսը կազմում է 6.6 հա, նախատեսված է 7 500մ2 մակերեսով սիզամարգ, սոճի՝ 76 հատ, ակացիա՝60 հատ, հացենի՝ 120 հատ, կեչի՝ 25 հատ, բարդի՝ 96 հատ, ուռի՝ 20 հատ, թխկի՝ 50 հատ, խնձորենի՝ 40 հատ, տանձենի՝ 40 հատ, եղևնի՝ 30 հատ, եղրևանի՝ 15հատ, մշտադալար սամշիտ՝ 500 գծմ:

Կանաչապատ տարածքի ոռոգումն իրականացնելու գոյություն ունեցող ոռոգման

համակարգից: Ոռոգումը կատարվելու է պոլիպրոպիլենե խողովակներով՝ կաթիլային եղանակով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար, անհրաժեշտ ջրաքանակը կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Համալիրի կառուցման համար ներգրավելու են 82 աշխատող: Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող ժամանակավոր բիոզուգարանից, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շահագործման փուլում ջրամատակարարումն իրականացվելու է «Վեոլա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն՝ համայնքային ջրատարից: Կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հեռանում են գոյություն ունեցող քաղաքային կոյուղու ցանց:

Նախագծով նախատեսվում է արևային էներգիայի վահանակներ, որի արտադրված էլեկտրաէներգիան օգտագործվելու է շենքերի կարիքների, ներքին սպառման և ընդհանուր տարածքների լուսավորության ապահովման համար կառուցվող համալիրի տանիքին:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն: Գազամատակարարումը իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կոշտ կենցաղային աղբ (ծածկագիրը՝ 912004000100 4) 29520կգ տարի, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, շինարարական աղբ (ծածկագիրը՝ 912006010100 4) 85000մ^3, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր և փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 1800 մ^3 ծավալով կտեղափոխվի Աշոցք համայնքի կողմից հատկացված վայր:

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղված հետևյալ միջոցառումները, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում, այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ:

Կառուցապատման ընթացքում իրականացվող բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 28 մլն 420 հազ. դրամ:

Պարճառաբանական մաս.Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Աշոցք համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Շիրակի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժինները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցություններն իրենց բնույթով սահմանափակ են, կարճատև և կրում են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող գործունեության շինարարության մեկնարկը սկսել ՀՀ օրենքով սահմանված համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում ներկայացված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Փոշի առաջացնող սորուն նյութերի /ավազ, խիճ և այլն/ տեղափոխումը իրականացնել փակ ծածկով մեքենաներով, պահեստները ծածկվել համապատասխան բարձրության թաղանթով:

-Տարածքի կանաչապատումը իրականացնել համաձայն Աշոցքի համայնքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի Կոճոռ թաղամասում նոր բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան